# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ. 4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 56-Ա

27 նոյեմբերի 2018 թվականի

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1.ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

/Զեկ.Ռ.Դավթյան/

2. ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Դավթյան /

3. ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՌԻՓՍԻՄԵ ՄԵԼԻՔԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Դավթյան /

4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. Ռ.Դավթյան /

5.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. Ռ.Դավթյան /

Ավագանու անդամներ՝ կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ադամյան Հրայր
2. Ադամյան Վարդան
3. Ադամյան Սաշա
4. Այդինյան Դորիկ
5. Հարությունյան Գագիկ

Գետահովիտ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Դավթյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ. 4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ N 57-Ա

27 նոյեմբերի 2018 թվականի

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Դավթյանը, նա նշեց , որ գյուղապետարան են դիմել համայնքի բնակիչներ՝ իրենց հողի հարկի արտոնություն սահմանելու մասին :Նա նաև նշեց , որ նշված դիմումատուների ընտանիքները գտնվում են խիստ անապահով վիճակում, և նշված արտոնության տրամադրումը որոշակիորեն կբարելավի նրանց կացությունը :

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ժ) ենթակետի պահանջներով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն ներքոհիշյալ բնակիչներին տրամադրելու հողի հարկի արտոնություններ՝յուրաքանչյուրին հետևյալ չափով.

Ադամյան Բախշի Թոռնիկի -10000
Ղազարյան Գենյա Կարապետի -10000
Բաղալյան Մարտիկ Նարիմանի -10000
Փաշինյան Անուշ Ամիրի -10000
Այդինյան Սերժիկ Դերենիկի -10000
Չապուխյան Վալերիկ Սիմոնի -10000
Այդինյան Վրույր Դերենիկի -10000
Այդինյան Սերյոժա Դերենիկի -16000
Այդինյան Օլեգ Սամվելի -10000
Անտոնյան Էդիկ Շահումյանի -10000
Ընդամենը `106000 (հարյուր վեց հազար) ՀՀ դրամ :

Ավագանու անդամներ՝ կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ադամյան Հրայր
2. Ադամյան Վարդան
3. Ադամյան Սաշա
4. Այդինյան Դորիկ
5. Հարությունյան Գագիկ

Գետահովիտ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Դավթյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ. 4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 58-Ա

27 նոյեմբերի 2018 թվականի

## ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՌԻՓՍԻՄԵ ՄԵԼԻՔԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի 5-րդ հարցի առնչությամբ հանդես եկավ համայնքապետի ժ/պ Ռ.Դավթյնը, ով նշեց, որ Հռիփսիմե Մելիքի Մելքումյանը դիմել է Գետահովիտի համայնքապետարան իրեն պատկանող 1 փ., 1/3 հասցեում գտնվող 11-022-0055-0004-0005 /ծածկագրով/ 397.3քմ հողամասին կից 11-022-0055-0006 /ծածկագրով/ 0.02555 հա հողամասը նախապատվության իրավունքով ընդլայման նպատակով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին

Գետահովիտ համայքի ավագանին քննության առնելով սեփականության իրավունքով իրեն պատկանող 1-ին փ.1/3 հասցեում գտնվող 397.3քմ հողամասին կից 0.02555 հա հողամասն նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու Հռիփսիմե Մելիքի Մելքումյանի դիմումը.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21 ենթակետով ,ՀՀ կառավարության << Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> 12 ապրիլի 2001թ.-ի թիվ 286 որոշման 20-րդ կետի գ/ ենթակետով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Թույլատրել Հռիփսիմե Մելիքի Մելքումյանին ուղղակի վաճառքով օտարել գ.Գետահովիտ 1-ին փ.1/3 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 397.3քմ հողամասին կից 0.02555 հա հողամասը՝ 1քմ՝ 528 դրամ կադաստրային արժեքով /վկայական N 09112018-11-0015/:

Ավագանու անդամներ՝ կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ադամյան Հրայր
2. Ադամյան Վարդան
3. Ադամյան Սաշա
4. Այդինյան Դորիկ

5.Հարությունյան Գագիկ

Գետահովիտ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ. Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ. 4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 59-Ա

27 նոյեմբերի 2018 թվականի

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Դավթյանը ,ով ներկայացրեց որ նպատակահարմար է գտնում համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի այլ հողերից գործառնական նշանակությունը փոխելու 0.05544հա (ծածկագիր 11-022-0053-0094)՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման նպատակով և օտարել:

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ.դեկտեմբերի-29-ի«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ1918 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն Գետահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի այլ հողերից գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման 0.05544 հա (ծածկագիր 11-022-0053-0094) և օտարել՝ 1 քմ 528 դրամ արժեքով:

Ավագանու անդամներ՝ կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ադամյան Հրայր
2. Ադամյան Վարդան
3. Ադամյան Սաշա
4. Այդինյան Դորիկ
5. Հարությունյան Գագիկ

Գետահովիտ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Դավթյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գետահովիտ համայնք, հեռ. 4-09-88, E-mail: getahovit.tavush@mta.gov.am


ՈՐՈՇՈՒՄ N 60-Ա

27 նոյեմբերի 2018 թվականի

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց համայնքապետի ժ/պ Ռ.Դավթյանը, ով ներկայացրեց ,որ նպատակահարմար է գտնում Գետահովիտ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝ գյուղատնտեսական նպատակային, արոտավայր գործառնական նշանակության 0.84101 հա հողամաս պետական գրանցում կատարել և աճուրդով օտարել

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի-29-ի«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների,և

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի ,

ՀՀ կառավարության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն Տավուշի մարզի Գետահովիտ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային, արոտավայր գործառնական նշանակության հողերից լոտ 1- 0,84101 հեկտար հողամաս (կադաստրային ծածկագիրը 11-022-0103-0063) ընդհանուր մակերեսով մեկ հողամաս պետական գրանցում կատարելու և աճուրդով օտարելու մասին.:

1 քմ մեկնարկային գինը 65.75 դրամ : Աճուրդով վաճառելու համար , օրենքով սահմանված կարգով տալ հայտարարություն :

Ավագանու անդամներ՝ կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ադամյան Հրայր
2. Ադամյան Վարդան
3. Ադամյան Սաշա
4. Այդինյան Դորիկ
5. Հարությունյան Գագիկ

Գետահովիտ համայնքի ղեկավարի ժ/պ Ռ.Դավթյան